ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

03 Մայիսի 2017 թվականի N 62-Ա

ԸՆԴԵՐՔԻ ՏԵՂԱՄԱՍԻ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 55-րդ հոդվածի և 57-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով «Լիլի-Արման» ՍՊ ընկերության՝ ՀՀ Արմավիրի մարզի Արազի ավազի հանքավայրի /1-ին, 2-րդ, 3-րդ տեղամասեր/ շահագործման փոփոխված աշխատանքային նախագծի՝ ՀՀ բնապահպանության նախարարության 2017 թվականի մարտի 31-ի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» թիվ ԲՓ 33 և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 28-ի «Արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության փորձաքննության» թիվ 2817 փորձաքննությունների դրական եզրակացությունները, «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի 2017 թվականի ապրիլի 18-ի թիվ Ֆ-108/17 գրությունը, «Լիլի-Արման » ՍՊ ընկերության 2016 թվականի սեպտեմբերի 07-ի թիվ 32 դիմումը և Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. «Լիլի-Արման» ՍՊ ընկերության (այսուհետ՝ ընկերություն) ՀՀ Արմավիրի մարզի Արազի ավազի հանքավայրում /1-ին, 2-րդ, 3-րդ տեղամասեր/ արդյունահանում կատարելու համար 2012 թվականի դեկտեմբերի 05-ի թիվ ՇԱԹՎ-29/344 թույլտվության գործողության ժամկետը երկարաձգել՝ 50 տարով. սահմանելով .մինչև 2067 թվականի հոկտեմբերի 25-ը:

2. Ընդերքի գործակալության պետին՝

1) 2 օրվա ընթացքում սույն հրամանի 1-ին կետի համաձայն կատարել փոփոխություն ընկերության հետ 2012 թվականի դեկտեմբերի 05-ին վերաձևակերպված թիվ ՊՎ-344 պայմանագրում և ծանուցել ընկերությանը հրամանը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում՝ պայմանագրի փոփոխությունն իր կողմից վավերացնելու մասին,

2) ընկերության կողմից պայմանագրում կատարված փոփոխությունները վավերացվելուց հետո 10-օրյա ժամկետում ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման թույլտվության, պայմանագրի, լեռնահատկացման ակտի փոփոխված փաստաթղթային տարբերակը,

3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագրի փոփոխությունը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փոփոխությունների փաթեթը չստանալու դեպքում, սույն հրամանը կհամարվի ուժը կորցրած,

4) ապահովել համապատասխան գրառումների կատարումն արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3.«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

4.Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո 2 ամսվա ընթացքում:

5.Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ